

Այս ծանր խօսքերը լսելով՝ կատաղութեան սարսուռ մը եկաւ կնոջ վրայ եւ աղղայները կրճտելով կէս մը ոտքի վրայ գալով նստած տեղաց, գոչեց կատաղութեամբ.

— Անօրէ՛ն, դեռ այդ վիճակիդ մէջ զիս նախատել կը համարձակի՛ս. բայց գիտցիր, որ այդ ողորմելի մարմնոյդ տերը ես եմ, իմ ձեռքես պիտի չի կարենաս ազատիլ. քանի՛ տարի էր, որ վրէժը սրտիս մէջ անմեռ կենդանի էր, վերջապէս ահա իմ ձեռքս մատնեց զքեզ աստուած: Զեզմէ երեսս ծածկելու պէտք չունիմ, դու արդէն մեռած ես, եւ մի՛ կարծեր թէ սովորական մահուամբ պիտի մեռնիս, այլ կտտամահ զքեզ պիտի սպաննեմ, մաղմաղ կրակներու վրայ զքեզ պիտի խորովեմ. անօրէ՛ն աւագակ, իմ տունս կոխե՛լ, իմ աղախիններս, իմ նժոյգս յափշտակե՛լ, իմ Ալիս ինձմէ կորզե՛լ, երբեք գթութեան մի՛ յուսար ահա ամիրապետին հրամահագիրը, որ իմ ինդրանացս վերջապէս լսեց եւ ինձ զքեզ պարգեւեց. միմիայն ճամփայ կայ քեզի մահուընէ ազատելու եւ իմ ներողութեանս հանդիպելու, անա՛րգ շուն. քու տուտ հաւատքդ կուրանաս եւ շղթայակապ ստրուկ իմ դուռս կը ծառայես...

— Ի՛նչ բարեբախտութիւն, քեզի պէս ջատուկի մը շղթայակապ ստրուկ դառնալու համար ապրիլ. ես որ ամէն անցաւոր մեծութիւն եւ փառք արհամարհեցի իմ հաւատքիս համար: Տե՛հ, եթէ աստուած այնպէս որոշեր է, որ այս մարմինը այդպիսի գարշելի ձեռքերէ մեռնի, իւր կամքը օրհնեալ եղիցի:

— Խոսե՛, հաչե՛, անհաւատ շուն, այդ լեզուդ հրացեալ ասեղներով պիտի ծակոտեմ, ճանչցնեմ քեզ թէ ի՛նչ կին եմ ես...

— Փո՛ւճ աշխատանք, ես քեզ լաւ կը ճանչեմ եւ ուրախ եմ, որ այդ խեղճ աղջիկները քու գազանային ձեռքեդ ազատեցի...

— Իմ Ալիս ի՛նչ ըրիր, անզգամ, խոստովանե՛ շուտ:

— Զու Ալի՞դ. այն դիշերուընէ ի վեր զինքը տեսած չեմ: